ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԻԳԴԻՐ. Արտ. Ղ. Ցովհաննիսեանցին. տարեկան բաժանորդագինը 6 ռուբլի է. ալէտք է ուղարկէք դարձեալ մի ռուբլի։

«ԲԱՂՄԱՎԷՊ»-ի խմբագրութեան։ Եթէ «Գեղունին» լաւելուած է «Բաղմավէպի», հապա ինչպէս է որ չէք բարեհաճում ուղարկել «Հումայի» խմբագրութեան, քանի որ մենք մեր տուած լաւելուածները ուղարկում ենք Ձեզ։

«ԱՐՏԵՄԻՍ». Ձեր համակրելի հանդիսի վերջին թիւերը չենք ստացած. խնդրում ենք ուղարկէք։

ՓԱՐԻԶ. «Ժամանակ ի խմբ. Շատ ժամանակ է որ «Ժամանակ» չենք ստանում։

ԷՋ. ա. Ֆ. Կոստանեան. «Հումայի ներկայ համարն ամբողջացած լինելով, չկարողացանք տալ Ձեր լօղուածը։

ՆԱԻԻԶԵԻԱՆ, Ա. Եդիգար. Ձեր թարգմանութիւններից քաղուածներ ենք անում. նիւթի առատութեան պատճառով անտիպ է մնում մնացած մասը։

Կ. Վ. Ձեր լօղուածը ստացանք, երբ «Հումայի» համարը արդէն տպում էր, կմնայ միւս համարին։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Հայկ Խաչատրեանին.—Առանց լօղուածները տեսնելու՝ ոչինչ ասել չենք կարող։

Կ. ՊՕԼԻՍ. *** Ստացանք և միւս համարից կտպենք։ Շնորհակալութիւն։

Ղ.ՈՒԲԱ. Ֆ. Վ. Ձեր լօղուածը ստացանք։

ԹԻՖԼԻՍ. Սէյրի. չի կարող տպուել։

«Հումայ»ի ներկայ համարի հետ մեր բաժանորդներին ուղարկում ենք «Հովսասեան մրցանակաբաշխութեան» յայտարարութիւնը։

Խմբագիր-հրատարակիչ՝ ԴԻՈՑ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆ